

«Անելիք բանկ հաշվարկային տոկոսադրույք» (ԱԲՀՏ)

2017 թվականի 3-րդ եռամսյակի համար

Արժույթ	ԱԲՀՏ	Ուժի մեջ է մինչև
ՀՀ դրամ	12.0%	30.09.2017
ԱՄՆ դոլար	7.0%	30.09.2017
Եվրո	4.5%	30.09.2017

ԱԲՀՏ-ի հաշվարկման կարգը և բաղադրիչները ըստ արժույթների

ՀՀ դրամ

$$ԱԲՀՏ = \frac{1}{5} \text{Վերաֆինանսավորման տոկոսադրույք} + \frac{4}{5} \text{Բանկի ավանդի տոկոսադրույք} + \text{Հավելյալ բաղադրիչ}$$

Որտեղ՝

- **Վերաֆինանսավորման (Ռեպո) տոկոսադրույք** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանվող Վերաֆինանսավորման (Ռեպո) տոկոսադրույք: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը մշտապես հրապարակվում է ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետային կայքում (www.cba.am)
- **Բանկի ավանդի տոկոսադրույք** – Բանկի կողմից ֆիզիկական անձանց համար սահմանվող և հրապարակվող 366-730 օր ժամկետով "Ապահով" (տեսակը՝ առանց ավելացման իրավունքի, ժամկետի վերջում տոկոսների վճարմամբ) անվանտեսակով ավանդի տոկոսադրույքը:
- **Հավելյալ բաղադրիչ** - սահմանվում է Ն(ԱՊ) կոմիտեի կողմից որպես տոկոսային մեծություն՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում ժամկետային ավանդների և վարկերի տոկոսադրույքների փոփոխությունները և առկա միտումները, ՀՀ տնտեսական ցուցանիշները՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ վիճակագրության ծառայության կողմից հրապարակված նյութերի, մասնավորապես հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության զարգացումները, ինչպես նաև միջազգային շուկաների փոփոխությունները:

ԱՄՆ դոլար, Եվրո

$$ԱԲՀՏ = \text{Բանկի ավանդի տոկոսադրույք} + \text{Հավելյալ բաղադրիչ}$$

Որտեղ՝

- **Բանկի ավանդի տոկոսադրույք** – Բանկի կողմից ֆիզիկական անձանց համար սահմանվող և հրապարակվող 366-730 օր ժամկետով "Ապահով" (տեսակը՝ առանց ավելացման իրավունքի, ժամկետի վերջում տոկոսների վճարմամբ) անվանտեսակով ավանդի տոկոսադրույքը:
- **Հավելյալ բաղադրիչ** - սահմանվում է Բանկի Ներդրումային (ակտիվների կառավարման) կոմիտեի կողմից որպես տոկոսային մեծություն՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում ժամկետային ավանդների և վարկերի տոկոսադրույքների փոփոխությունները և առկա միտումները, ՀՀ տնտեսական ցուցանիշները՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ վիճակագրության ծառայության կողմից հրապարակված նյութերի, մասնավորապես հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության զարգացումները, ինչպես նաև միջազգային շուկաների փոփոխությունները:

ԱԲՀՏ-ի սահմանումը

ԱԲՀՏ-ն սահմանվում է Բանկի Ներդրումային (Ակտիվների և պասիվների) կոմիտեի կողմից յուրաքանչյուր եռամսյակի համար և հրապարակվում Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

ԱԲՀՏ-ն կարող է արտահերթ կերպով վերանայվել, եթե վերջին հատատված ԱԲՀՏ-ի հետո տեղի են ունեցել հետևյալ փոփոխություններ՝

- ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Վերաֆինանսավորման (Ռեպո) տոկոսադրույքի աճ/նվազում 1%-ային կետ:
- Բանկի կողմից սահմանվող և հրապարակվող ավանդների տոկոսադրույքների աճ/նվազում 1%-ային կետ: